

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 130

Ամենաշատ գործածւած հատւածը նրանց կողմից որոնք ուսուցանում են որ Յիսուսը դժոխք իջաւ՝ ոչ վերջացնելու փրկութեան գործը, այլ մի առաքելութեամբ հռչակելու աւետիսը, Ա. Պետրոս 3:18-20ն է, ուր Պետրոսը գրում է թէ՛ «Քրիստոսն...որ թէ՛ւ մեռաւ մարմնով, բայց կենդանի եղաւ հոգով: Որով գնաց բանտումը եղող հոգիներին էլ քարոզեց:» Ուրե՛ր էին այդ բանտումը եղող հոգիները: Եղել են զանազան պատասխաններ այս հարցումին՝ ինչպէս անհաւատներ, Հին Կտակարանի սրբեր, ու նոյնիսկ դէտեր: Ոմանք վաղեմի եկեղեցում ուսուցանեցին թէ Յիսուսը գնաց դժոխք (հէյդիզ), որպէսզի հռչակեր աւետիսը անհաւատներին, որ հաւատալով կ'ազատուին: Նման տեսանկիւններ մերժւած են Բողոքական եկեղեցիներից, քանի որ մահից յետոյ փրկութեան երկրորդ պատեհութեան կամ յաւելեալ առիթների գաղափարը խորթ է Աստուծաշնչին (Ղուկաս 16:22-24, 26, Գաղատացիս 6:7-8, Եբրայեցիս 9:27):

Ուրիշներ, ինչպէս Հռովմէական Կաթոլիկ եկեղեցին, ուսուցանում են թէ Քրիստոսի հոգին գնաց հէյդիզ՝ մեռելների բնակարանը, հռչակելու աւետիսը, արձակելու եւ երկինք տանելու ոչ անարդարների հոգիները իսկ արդարների՝ այսինքն Հին Կտակարանի ժամանակաշրջանի սրբերին, որոնք Աբրահամի գոգումը սպասում էին իրենց Փրկչին: Նման մի գաղափար հաստատւած է Արեւելեան Ուղղափառ (Օրթոտոքս) եկեղեցում, ուր Քրիստոսը Իր մահուան ու յարութեան միջոցով բացեց դժոխքի դռները եւ ազատագրեց այս սրբերին, տանելով դրանց երկինք:

Նոյնիսկ Բողոքականութեան մէջ, շատ տնտեսականներ ընդունում են այս տեսանկիւնը, բաժանելով Հին Ուխտի հաւատացեալներին Նոր Ուխտի հաւատացեալներից, ուսուցանելով որ իրենց մահից յետոյ նախքին խմբի հոգիները գնացին հէյդիզ՝ այսինքն Աբրահամի գոգը, որոնք յետագայում երկինք տարուցին Քրիստոսով. մինչդեռ նրանց հոգիները որոնք մեռնում են Քրիստոսից յետոյ ուղղակիօրէն մտնում են երկինք: Սակայն ինչպէս բացատրուեց ուխտական աստուածաբանութեան դասընթացքում, նման հաւատացեալների երկու գատ խմբերի տեսանկիւնները բոլորովին հակասորբգրային են: Աստուծաշունչը ուսուցանում է Աստծոյ ժողովրդի միութիւնը. եւ բոլոր նրանք որ հաւատացին Աստծուն ու Նրա խոստումներին համարուեցին որպէս ուղղարար, պէտք ունենալով ուրիշ ոչինչ փրկութեան համար (Հռովմայեցիս 4:1-8). եւ ուստի իրենց մահից յետոյ բոլոր հաւատացեալների հոգիները մտնում են Աստծոյ օրհնեալ ներկայութիւնը երկնքում:

Ուրիշներ ուսուցանում են թէ «բանտումը եղող հոգիները» Նոյի օրայ ընկած հրեշտակները էին, որոնք մարդկանց աղչելեանց հետ կատարած սեռական մեղքի պատճառով, Աստծուց կապուեցին դժոխքում: Սրանց է որ Քրիստոսը գնաց եւ հռչակեց Իր փառաւոր յաղթութիւնը: Այսպէս տեսանկիւնը բաւականին բարդ ու երեւակայական է թւում, եւ այդ գլխի սովորական իմաստին ու ենթահողին անյարմար:

Այժմ դառնանք եւ քննենք Ա. Պետրոս 3:18-20ը: Թէպէտ մարդկանց մեծամասնութիւնը կարծում են որ Յիսուսի այդ առաքելութիւնը տեղի ունեցաւ Իր մահիցը յետոյ, սակայն այս հատւածը այդ չի ասում: Պետրոսը միայն այստեղ ասում է թէ Սուրբ Հոգով կամ միջոցով՝ որն մեռելներից յարուցանեց Նրան, Յիսուսը գնաց ու քարոզեց մի պատգամ նրանց որոնք չհնազանդեցին Նոյի օրերումը: Ոչ մի բան չի ասում բոլոր Հին Կտակարանի սրբերի կամ անհաւատների, կամ էլ դէտերի առթիւ: Սրանք այդ մարդիկ են որոնք կենդանի էին Նոյի ժամանակում որոնց Յիսուսը քարոզեց Իր պատգամը՝ Սուրբ Հոգու գորութեամբ, եւ Նոյի միջոցով (Ա. Պետրոս 1:11, Բ. Պետրոս 2:5): Նրանք չհնազանդեցին պատգամը եւ մեռան անհաւատութեամբ, եւ ուստի Պետրոսը կանչում է նրանց այն հոգիները որոնք այժմ դժոխքում են՝ հենց նոյն տեղը որ Ղուկաս 16ի հարուստ մարդը վախճան գտաւ: Այս մեկնաբանութիւնը հատուածի պարզ ընթերցման ու նաեւ դրա անմիջական ենթահողին ամենայարմարն է թւում:

Ուրիշ այլ հատւածներ որոնք նաեւ գործածուել են ուսուցանելու թէ Քրիստոսը դժոխք իջաւ Հռովմայեցիս 10:6-7, Եփեսացիս 4:8-10, եւ Ա. Պետրոս 4:6 են: Եզրափակելով, չկայ որեւէ սուրբ գրային ապացոյց այդ գաղափարի համար որ Իր մահից յետոյ Քրիստոսը դժոխք իջաւ, մի քարոզչութեան առաքելութեան նպատակով՝ ոչ-հաւատացեալներին, մատակարարելով նրանց փրկութեան մի յաւելեալ առիթ. կամ սրբերին, արձակելով նրանց երկինք. կամ նոյնիսկ ընկած հրեշտակներին, հռչակելով նրանց դէմ յաղթութիւն: Սրանք այդ հատւածների մէջ այսպէս գաղափարների ներադրութեան արդիւնքն են, քան թէ դրանցից մեկնաբանել կամ դուրս հանել այդ ինչ որ դրանք ուսուցանում են:

Առաքեալների Հանգանակի եւ «Նա դժոխք իջաւ» արտայայտութեան վերաբերեալ, հաշիւ առնելով աստուծաշնչային փաստի պակասութիւնը, որոշ աստուածաբաններ մերժել են այս գաղափարը ու կոչել են այդ նախադասութեան բոլորովին վերացումը Հանգանակից՝ ու դրա հետ մեծ շփոթութեան պատճառը: Ուրիշներ, որոնք արտայայտութեան պահելու կողմն են, ու թէպէտ հաղորդում են սուրբ գրային ուղիղ վարդապետութիւններ թէ ինչ տեղի ունեցաւ Քրիստոսին՝ նոյնիսկ եթէ ոմանք պնդում են թէ դրանք Հանգանակի շարքին չեն յարմարում կամ չեն աւելացնում նշանակաւոր իմաստ, սակայն նրանք յստակօրէն մերժում են որեւէ հերետիկոսային խորհուրդ Քրիստոսի նկատմամբ, որ գնաց դժոխք որպէսզի աւելի չարչարի եւ աւարտի փրկանաւորութեան գործը: